Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

18.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 26-րդ, 17-րդ, 25-րդ, 9-րդ, 4-րդ քաղաքացիական իրավունք բաժնի 29-րդ, 15-րդ, 20-րդ, 28-րդ, 45-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 26

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ձևակերպումը (կարող է) թույլ է տալիս ենթադրել, որ որոշակի դեպքերում վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը կարող է հանգեցնել կողմերի մրցակցության սկզբունքի խախտման:

Հարց 17

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցվորի, իսկ գործին մի քանի հայցվորների մասնակցության դեպքում՝ նրանց բոլորի համաձայնությամբ, իրավունք ունի կիրառելու հեռակա դատաքննություն այն դեպքերում, երբ ծանուցված պատասխանողը չի ներկայացել նախնական դատական նիստին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու, գործն իր

բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն:

Նշվածից հետևում է, որ հեռակա դատաքննություն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ առկա է հայցվորի (հայցվորների) համաձայնությունը և ծանուցված պատասխանողը չի ներկայացել նախնական դատական նիստին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու, գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն, ինչից էլ հետևում է, որ Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված բ) տարբերակն սխալ է, քանի որ միայն նշված տարբերակում առկա պայմանը բավարար չէ հեռակա դատաքննություն կիրառելու համար:

Հարց 25

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից:

Հարց 9

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, ապա Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված բ) տարբերակը՝ ա) և գ) տարբերակների առկայության պայմաններում սխալ է, քանի որ վիճարկվող անհատական իրավական ակտը բոլոր դեպքում ճանաչվում է անվավեր, եթե դրանում նշված չէ համապատասխանաբար աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու փաստական կամ իրավական հիմքը, ինչից էլ հետևում է, որ ճիշտ պատասխանը գ) տարբերակն է:

Հարց 4

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 29

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հավակնորդի կողմից ընտրվել է առաջադրված հարցի ճիշտ պատասխանը, այն է՝ 3-րդ տարբերակը, ինչպես նաև այն, որ Ստուգող հանձնաժողովի կողմից Հավակնորդի միավորը չի հաշվվել, Հանձնաժողովը գտնում է, որ այն ենթակա է վերանայման:

Հարց 15

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 895-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ հաճախորդը պատասխանատվություն չի կրում ֆինանսական գործակալի կողմից զիջման առարկա համարվող պահանջը պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե այլ բան նախատեսված չէ հաճախորդի և ֆինանսական գործակալի միջև կնքված պայմանագրով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի փաստարկներին, ապա խնդրի փաստական հանգամանքներից հետևում է, որ պայմանագրի կողմ է հանդիսացել Բանկը, ինչն էլ բավարար էր գնահատելու, որ հարցը վերաբերում է կողմերի միջև կնքված դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով ծագած իրավահարաբերություններին:

Հարց 20

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 473-րդ հոդվածի 2-րդ մասով, որի երկրորդ պարբերության համաձայն՝ վաճառողն իրավունք ունի նման պայմանագիրը կատարել դրանում սահմանված ժամկետից շուտ կամ ավարտից հետո՝ միայն գնորդի համաձայնությամբ:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, ապա հարցադրման պատասխանը պետք է ընտրվի այլ խնդրի փաստական հանգամանքների, այլ ոչ թե ողջամիտ ենթադրությունների հիման վրա:

Հարց 28

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում (տես թիվ ԵԱՔԴ/2190/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Հարց 45

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 977-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 9467 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական իրավունք բաժնի 29-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ